

յառաջ հրաւիրեցին Գեր. Մակար Արքազանին. Կայորը մի քանի  
խօսքերով եւ հարցերով բարեհանեց մեծարել Հայոց Մայր Աթու-  
ռի ներկայացուցին: Եկեղեցականք միւս անգամ պատուասի-  
րուեցին պալատումը ճաշով հետեւեալ հինգշաբթի օրը 19 ին  
Մայիսի:

Խնձ ցանկալի էր իրրեւ ականատես համառօտիւ նկարագրել  
միայն եկեղեցական հանդէ որ, բայց թող ներուի որ ընդարձա-  
կեցի, ուստի մը համառօտ խօսք եւս, վերջացնումեմ թուզթո,  
թէղէտ հանդիսի բոլոր օրերում բայց առաւելապէս առաջին  
երեք օրը հիանալի էր Մոսկուայի ճրագավառը, այս բառի  
նշանակութիւնը տկար է, լաւ է ասել ամբողջ Մոսկվան լոյս էր  
զանազան գոյներով եւ նկարներով ելեքտրական արեւներով եւ  
Մոսկվա գետից օգի մէջ բարձրացած ջրերի ծխածաններով։ Այս  
պէս պայծառ եւ ուրախ էր ժողովրդեան սիրան ու երեսը եւ  
ամենայն աեղ փայլում էր վայելուչ կարգադահութիւն։ Խնձու  
էր հանգիսաւոր մուտքը, այնպէս եղաւ եւ հրաժեշտը, որ շա-  
րունակուեց մինչեւ ամսի վերջերը։ Խոկ մեր սրբազն հիւրը—8,  
Մակար Սրբեալիսկոպոսը—իւր հրաժեշտը տուեց Մոսկվային 27  
ին Մայիսի։

50 *S.-, k.-k.* 1885: II--III-

ՑՈՒՑԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ ԽՈՏՏԵՐՆԱԿԱՐԱ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. ՆԻԿՈՂԱՑՈՍ ԹԱՇՔԵԱՆԻ ՅՈՒԹՈՒՄԻ ԱՋՈՒՄՆԵՐԻ

Մօտ օրերս իմ յարգելի ուսուցիչ պ. Նիկողայոս Թաշճեանի ստորագրութեամբ լոյս տեսաւ Կ. Պօլսում հրատարակուող «Հայրենիք» լրագրի մէջ մի երկարաձիգ յօդուած, որի մէջ պ. Թաշճեանը ամենայն անարդ և անպատիւ խօսքերով յարձակուելով Եջմիածնի Ախուզի Արքական անդամոց վերայ, չարաչար պարստուում և յանդիմանում էր նըրանց իրենց այն մտադրութեանց համար, որ իրր այժմեան ձայնադրուած Շարականի եղանակներ և այլ երգեցողութիւնք իրենց անձտութեամբ և սխալ կազմակերպութեամբ անհաջոյ թուելով Սինօդակականաց, ուստի և նրանց գործածութիւնը խսպառ դադարեցնելու նպապատակաւ, խորհուրդ կազմելով արդէն վճռել են ինձ ուղարկել երբնջակ Գեր. Գրիգոր Նպիսկոպոս Յովենանի մօտ, որ այս անուանի քաջ

երաժիշտ Խպիսկողոսից ձայնագրեմ մեր հին չարականի ձայները ո-  
քոց պ. Թաշճեան հանգուցեալ Հայրապետի պէտ պարսկական խաւա-  
շփոթ եղանակներ և անուանում ըլքիտեմ ինչ ազացոյցով Այսպէս  
նոյն յօդուածի մէջ պ. Թաշճեանի հայրենի աւանդութեանց վրեժիքն-  
դիր սիրտը կարեվէր խոցուած ենք տեսնում և այն մասին որ նոյն  
շարականի ձայները բազմաշխատ Աւորովի ճիշտ երգուած եղանակնե-  
րը լինելով ցաւումէ որ Սինոդի անդամք ի զուր նոցա ոչնչացնելու  
պատճառ պիտի լինեն անիոնչեմարտը և նորէն եկեղեցական երգեցո-  
ղութիւնք պարսկական և ոռոսական անձաշակ և անախորժ եղանակ-  
ների պիտի վերածեն և այս ի հարկէ ոչ պի ինչից ստիպուած եթէ ոչ  
առ հանգուցեալ Հայրապետը ունեցած անշափէ կրթից և ատելութիւնից:

Պ. Թաշճեանի այս յօդուածը վշտացրեց որպէս իմ՝ նոյնպէս և շա-  
տերի սիրտը վշտացրեց ոյն պատճառում որ բոլորովին սուս և սխալ  
էր Հայրենիքի պ. խմբագրի իրեն դիտողութեան յանձնած ոյս ան-  
հիմեթ և անախորժ լուրը Սինոդը ոչ ատելութիւն ունի առ հանգու-  
ցեալ Հայրապետը և ոչ նորա մեծակործութիւնները ռանակուի անելու  
ցոյցիր արան է մինչև ցայսօր Ահա այս և սորա նման յարգելի  
պատճառներից ստիպուած պ. Թաշճեանի այս կեզծուպատիք գրու-  
թեան գէմ ակամայից պարտաւորվում եմ պատասխանելու ուստի  
թող ինձ ներէ պ. Թաշճեանը որ փոքր ինչ խիստ պիտի խօսեմ իւր  
չետ:

Պ. Թաշճեան ևս ձեզ ճանաչում եմ միմիայն իբրև քաջ ձայնագրա-  
գէտ ինչպէս և եղուարդ Հիւրմիւզեան հայկաբանութեան մէջ անուա-  
նի է այնպէս և զուք ձայնագրութեան մէջ Այս երկինքը շնորհած է  
ձեզ այն պարզել որ մահկանացուների սրտի հետ համարձակ խաղ ա-  
նելու բաղդն ունիք այսօր որին ձեր թովվական արհեստով կարող էք զիւրապէս շարժել և յուրախութիւն և ի տրտմութիւն Այս մահկա-  
նացուների սրտի համար և կենսարեր գարուն էք և ցրտաշունչ ձեռն  
վասնորոյ ինչպէս զիտէք իւրաքանչիւր գրուածքի ոդու և զօրութեան  
յարմար և ներդաշնակ ձայն գնել նոյնպէս զիտէք և ձեզ ամենայն  
ծանօթ և անծանօթ եղանակ արագ և զիւրութեամբ ի զրի առնել Այդ  
ունեցած թանկագին շնորհգ որպէս ապիկար աշակերտիս նոյնպէս և  
բազմաց իսկ յայտնի է բայց զալով թէ կանոնաւոր և անսխալ շա-  
րական դիտէք որ այս օրուան օրս ձեր գրածներն եւս ստորի և բուն  
իսկ Աւորովի ոգեշնչնչ եղանակներ համարելով անարգումէք ուրիշ  
եղանակներն եւս այդ մասին քաւ լիցի ինձ ձեզ համար երաշխաւորել  
Շարական ըլքիտենալու դ համար վկայ ուրիշ մէկը չեմ հանի ձեր  
գէմ բաց ինձանից և մի ճշմարտաւէր անձից 1874 թուին երբ ձեռ-  
նամուխ եղաք շարականներ զրելու ինչպէս ևս նոյնպէս և Աջմիած-  
նի ամբողջ միաբանական Աւստրլ այն յայսն ու ակնկալութիւնն ունէ-  
ինք ձեզանից որ հմուտ և տեղեակ գոլով շարականներին պիտի մեզ

լսեցնել տայիք տօնելի Մեսրովրի քաղցրահնչիւն եղանակները. բայց բանից ինչ դուրս եկաւ, Պալատցի հաջի Կարապետ քաջ երաժիշտ ախրացուն, որ խիստ ընդել և հմուտ էր Պօլոյ եղանակներին և շարականներ գրելուն ձեզ աջակից, համբաւեց ձեր մասին որ, ինչպէս ասումնեն, բորիկ էք եղել շարականներից. և այն ինչ որ գիտէք, ինչպէս թռչունները մարմնով և գունագեղ փետուրով զատ և որոշ են միեւանցից, այսպէս ձեր գիտեցածն ևս շարականների մի խառնուրդ լինելով, ձայնով և եղանակով խիստ տարբեր են եղել թէ նոյն իսկ վերոյիշեալ Կարապետի և թէ հանգուցեալ Հայրապետի գիտեցածից. Այս ստուգեցինք նոյն իսկ ձեր բազմաթիւ սեագրութեան տետրակներից, որ շարականները ձայնագրած միջոցդ հաւան չըկենալով հանգ. Հայրապետի գիտեցածին, ձերն էիք նախապատիւ համարել և գրել. հանգ. Հայրապետը ևս հաւան չըկենալով ձեր գիտեցածին, իրեն էր գրել տուել. ձեր և հանգ. Հայրապետի գիտեցածներին ևս չհաւանելով հաջի Կարապետը, իրեն էր անսխալ համարել և գրել տուել. Նրանի թէ ձեզ հետ այդ միջոցին Վեհարան գնալու բաղդն էի ունեցել, գուցէ և իմ գիտեցածն էլ գրած կը լինէիք. ինչպէս նոյն իսկ այդ բանի համար ձեր այստեղից տժգոհութեամբ մեկնելուց յետ, էլ ձայնաւոր և քիչ շատ շարականին տեղեակ մարդ չըմնաց, որ ըբարձրացաւ. Վեհարան և իրեն շնորհքը ցոյց չըտուեց. Այսպէս պ. Թաշճեան, ձեր և ձեղանից յետ կազմած շարականը նմանուեց ճիշտ այն խղճալի աղքատ մարդոյ պատառութուն հանդիրձին, որ զատիկ օրը նոր հանդերձ շինելու կարողութիւն չունենալով, ի պատիւ զատկի իւր հինն ևս գոյնզգոյն շորերով էր կարկատել. որին կատակերգուի մինը պատահելով առաջին անգամ, ասել էր այս սուր և ծիծաղաշարժ խօսքը թէ, « տեղ տեղ շնորհաւոր », և նա ոչ նուազ զուարձալի խօսքով պատասխանել էր թէ, « օր ու մէջ ապրիս ». որոնք և ինձ շատ յարմար են գալիս և ձեզ ասել.

Վերոյգրեալ առաջին ծիծաղաշարժ առածի նմանութեամբ յիշում եմ ես մի ցաւալի դէպք, որը իսկապէս կատարուել է հենց մեր խեղձ շարականների գլխին. այն է, հանգուցեալ Հայրապետը, սուրբ Գէորգի տօնը ամենայն կերպով վայելուչ կատարելու համար, առանձին ուշ էր դարձրել և նորա շարականների վերայ յատկապէս մի զարգարանք տալու. ուստի և իւր թեթև եղանակ « Ավ սուրբ Գէորգ » հասարակ մանկունքը ծանր չափով է գրիլ տուել ձեզ, որ սխալ է. Պէտք է ասել որ, սուրբ Գէորգ զօրավարի համար շինուած « Քաջամարտիկ » շարականը մեր երանաշնորհ նախնիքներից ընդունելութիւն գտած չէ եկեղեցում երգուելու. և շարականից դուրս ձգուած է եղել՝ մինչև ձայնագրեալ շարականի տպագրութիւնը. Պետրոս եպիսկոպոսը հաւան չըկենալով Պետրոս և Պօղոս առաքեալների Յնծա այսօր եկեղեցի « շարականի թեթև և սահուն եղանակին, սա ևս չըգի-

տեմ ի՞նչ նպատակաւ ի պատիւ Պետրոս առաքեալի այդ շարականն էր կոկել տուել, Ստեփան եպիսկոպոսը տրտունց յայտնելով սուրբ Ստեփաննոս նախասարկաւագի « Նահատակ բարի քրիստոսի » շարականի գողորիկ եղանակի գէմ՝ պատճառելով իրը անախորժ եղանակ, սա ևս ի պատիւ իւր անուանակցի, այդ շարականն էր ըռնդիլ տուել (յղկել). Ո՞վ չէ կարող երաշխաւորել որ, դուք ևս պ. Թաշճեան, Նիկողայոս սքանչելագործի շարականը չէք կոկած, չէք զարդարած, Կարծեմ թէ, Եթէ Վեհարանի՝ տօն ունեցող ծառաները տեղեակ լինեին այս բանին, անշուշտ նոքա ևս իրենց անուանակից սուրբերին պատուելու համար, պիտի ձեռվ շնորհքով, դրստել տային նոցա շարականները, Վերջապէս այս բարկյաջող դէպքում միպյն Վահրամն է անբաղդ մնացել, որ տօն չէ ունեցել Աւրեմն պ. Թաշճեան, զուք ի՞նչպէս էք վկայում որ այժմեան շարականները Մեսրովի պարզ և անպաճոյժ շարականներն են. և ես ի՞նչպէս ըշհաւատամ որ բոլոր շարականները ձախ ու ծուռ և այլանդակ եղանակների վերածուած չեն. Եթէ այս իմ բոլոր ասածներս կրից յառաջացած զրպարտութիւն կըհամարէք, բաղդատեցէք ձեր զրած շարականը Երուսաղէմում գտնուած ձեռագիր ձայնազրեալ շարականի հետ. կամ զրածներիս համար երգել տուէք հաջի Կարապետին. դուցէ և այն ժամանակ կըհասկանաք թէ խօսքերս իրաք ստո՞յդ խօսքեր են, եթէ աւելորդ բարբանջմունք, Այս ձեր օրերում պատահածները, գամ իմ տեսածներիս.

Պ. Թաշճեան, ի՞նչպէս ձեր վերայ այն հաստատ համոզումն ունիմ որ օրինաւոր շարական երգել ըշգիտէք, նոյն հաստատ համոզումն ունիմ և հանգուցեալ Հայրապետի վերայ որ, թէ միօրինակ շարական երգել ըշգիտէր, և թէ գիտեցածներն ևս ձեր սովորական խօսքով ասեմ ույդուր մայ\*) Էին: Օրինակ, երբ 1881 թուին հանգուցեալ Հայրապետի ներկայութեամբ ձայնազրումէի բոլոր օր հն ու թեանց քաղուածքները, հանգուցեալ Հայրապետը գտուարանալով երգել շատ և շատ շարականք, անգամ զիւրիններն ես, երբեմն երբեմն ընդհատելով երգելիք շարականը « Ծօ տղաս օգնէ Է՛ օգնէ Է՛ » փաղաքշական խօսքերով քաջալերումէր ինձ, և իրաւունք եր տալիս նոցա կոպիտ տեղերն ուղղելու. ես ևս ըստ իմ բարեհաճ կամաց և քմաց կապկպում էի նրանց այնպէս՝ ի՞նչպէս իմ վարպետութիւնն ինձ ներումէր: Այս թողնենք, Պատահեց մի քանի անգամ ես, որ բոլորովին ըշգիտենալով մի քանի շարականների ձայներ, հրամայեց ինձ նոյն իսկ իւր առաջ ույդուրմայ անել այդ շարականները. և ես երբ աւարտած կարդումէի իւր առաջ, դառնայ ի՞նչ ասէ ինձ լաւ է պ. Թաշճեան, « Ապրիս տղաս, աղեկ գրեր ես, ճիշտ իմ գիտեցածն ալ այդպէս է»: Այս խօսքերը լսողը

(\*) Ույդուրմայ անել: կը նշանակէ յարմարացնել, սաղացնել:

եթէ գուք լինէիք չըսպիսի՞ ծիծաղէիք, Միով բանիւ ինչպէս ձեր զրածների մեծ մասը ույդուրմայով են կազմուած, և ոյնպէս և իմ զրածների մեծ մասը լոկ իմ ույդուրմայով են կազմուած, այժմ ենթագրեցէք թէ այդ շարականները Մեսրովի՞ եղանակները կը կրեն թէ Սահակ սարկաւագի: Եւ այս խօսքերի մէջ եթէ ստումիւն կայ, հանգուցեալ Հայրապետի դէմ ունեցած մեղքս պղջմամբ կապաշաւեմ իւր ցուրտ գերեզմանի վերայ: Իսկ ձեր դէմ ունեցածն ես կը քաւեմ սուրբ Եջմիածնի մէջ, Արեմն Պ. Թաշճեան, այսաւսակ մի խառնիճաղանձ եղանակների համար գուք ի՞նչպէս հաստատապէս իրրե մի երանաշնորհ նախնիքների ոգեշունչ եղանակներ ջառագովելով, անգոսնումէք և նրանց՝ որոնք նոցա կանոնաւորելու ձեռնամուխ կրինին. Թող թէ այդպիսի մի խօսք մի առարկայ չէ եղել ոչ վանքիս մէջ և ոչ վանքից դուրս:

Պ. Թաշճեանն ձեր յօդուածի մէջ անընդհատ և անխափի գովում էք այն ամենայն երդ և երգեցողումիւնք, որոնք առ հասարակ հանգուցեալ Հայրապետի և ձեր աշխատութեամբ և խմբագրութեամբ լոյս տեսան Եջմիածնի մէջ, վասնորդյ և համարումէք նոցա անյեղի և զերծ և անփնաս մնացած ժամանակի կորստարեր պարագաներից. և այս խօսքերը այնպէս էք արտասանում որ, կարծես թէ դուք և հանգուցեալ Հայրապետը երգեցողութեան առարկան ուսումնասիրելու համար հէնց այժմ՝ Մեսրովի շինած վարժարանից էք գալիս: Եւ այդ երգերի մասին առած գովասանքներդ բաւական շրջամարելով, երաշխաւորում էլ էք որ, նոքա ամենքը ուսուսաստանի և տաճկաստանի հայերից յարդուած և ընդունած են իրենց անեղծութեանց և ներդաշնակ կազմակերպութեանց համար, ուստի ևմի միայն Սինօդն է որ հաւան շրկենալով մտագրուել է իւր ատելութեան կնիքը զնել զրանց վերայ. և եղանակների կանոնաւորութեան մասին ապացոյց էք բերում Յակով Մծրեայ Հայրապետի մի կտոր շարականը, որը առաջին անգամ ձայնագրաւած կօ ի չափ աշակերտներիս խմբովին երգել տուիք եկեղեցում իւր տօնի օրը ի ներկայաթեան Ամենուղիկոսի և բազմաթիւ ժողովրդեան, առ որ աւելացնում էք թէ, «ժողովուրդը խնդութենեն հրաշք կարծեց մինչեւ շարականի աւարտումը»: Բայց պ. Թաշճեան, զրանով չէ ապացուցում որ, այդ շարականն ևս անեղծ պահած է իւր եղանակը. և եթէ ժողովրդին ախորդ է թուել, ոչ այնքան եղանակն է որ ախորդ է թուել, որչափ կօ աշակերտներիս երգելը Այսպիսի տպաւորութիւն առ հասարակ գործում են մարզիս վերայ այն նոր երգերը կամ օտար եղանակները, երբ առաջին անգամ միք լսում: Փարձեցէք հապա մի ձեր շնորհաբեր ոտքը զնել ուսուսատանի հողի վերայ, տես թէ այդ եղանակներին հաւանող մէկը կը գտնէք, Եւ ո՞ր մէկը արդեօք մինչեւ ցայժմ շնորհակալութիւն մատոյց ձեզ, ձեր այդ ծանր աշխատութեան համար, Ո՞ր հնախոյդ հայր մինչեւ ցայժմ հետաքրքրուեց այդ Աստվածալիյն մատեանը բանալ և

այնտեղ Մեսրովի եղանակներ որոնել. եթէ կարողեք, յայտնեցեք ինձ նոցա անունները, Եւ եթէ իրօք այդ սուրբ գիրքը կրումէ իւր մէջ ոռւսաստանի և տաճկաստանի հային հաճելի եղանակներ, հապա ի՞նչ անենք դրանց շինծու և անձոռնի կազմակերպութեանց մասին ոռւսաստանի հայերի կողմից արդեն յարուցված այն աչագին տրտունջները և աղմուկները որոնք սմենայն օր գրեթէ լսվում են, չեմ ասում եկեղեցիներում այն պատճառաւ, որ Ոռւսաստանի ամեն մի եկեղեցի դրեթէ ունի այդ գրից, բայց գործ չէ դնում նորան ժամասացութեանց ժամանակ, և այս ո՛չ թէ ձայնագրադէտ քահանայ կամ գպիր չունենալու պատճառաւ, այլ տաղտկալի են առհասարակ նորա վատ և անդիւրեկան ձայնները, Իսկ տաճկաստանցոց համար միայն այսքան կասեմ որ, եթէ նորա ընտիր և միանգամայն տաճկաստանի բուն ախորժալուր եղանակները լինեին, անշուշտ 600 օրինակ տպուած շարականներից գէթ մի քանիսը կրգտնուեին Տաճկաստանում. բայց կարող էք ուղարկել ինձ եղածների թիւը:

Աներկրայ եմ որ, այսպիսի մի բան, որպիսին է Ըարականը երբեք նախատինք չէր բերիլ ձեզ, եթէ նորան ձայնագրելու ժամանակ ձեզ երգող միայն ընտրէիք հաջի Կարապետին, որը իւր երաժշտական հրմտութեամբ, անփոփոխ և միակերպ երգեցողութեամբ, գրեթէ գլուխ և առաջինն է Պոլսոյ մէջ. կամ աջակից ձեզ ունենայիք երաժշտական խաղերին խիստ հմուտ այն համբաւաւոր երգիշները, որոնք կան այժմ թէ Պոլիս և թէ Պոլսից դուրս ասել կուզեմ, որ կարող էիք վերադառնալ Պոլիս ձայնագրել, ապա Էջմիածին տպագրել տալ, բայց այստեղ դուք չեք մեղաւոր . . . . .

Իսկ գալով այն խնդրին, որ նախ քան ձեր Էջմիածին գալը Աքքիրմանէն Պ. Մարկոս Ղուկասեանը հանգուցեալ Զալալեան Սարգիս եպիսկոպոսի միջոցաւ ուղարկած է եղել Հ. Հայրապետին ձայնագրուած մի պատարագի տետր, որին և դուք ընթռնելով գտել էք բոլորովին ոռւսական եղանակներով շարայարուած մի անպիտան բան, և որին քամահելով այս կուզեք հասկացնել թէ, «ոռւսական հոտ կուգար միջէն». և որով շափում էք թէ մեր հին եղանակները ևս նոյն են կամ այն պիտի լինին ինչ որ է այդ տետրը, այստեղ ինձ ոչ այլ ինչ խօսք չէ մնում ձեզ ասել, բայց թէ ձեր քմահաճ ենթադրութեան վերայ զարմանալով գարմանալ. ի՞նչ տեղից արգեօք իմսցաք որ նորա ոռւսական եղանակներ էին, կարելի է թէ Հարեշի եղանակներ էին. միթէ ոռւսաստանում մի որևիցէ երգ ձայնագրուելով ոռւսական եղանակի պիտի ճանաչէք. հապա ինչո՞ւ ձեր գրած շարականների մէջ չը կաթեց, շթափեց ոռւսական այդ բազմազեղ շնորհքը, Մարկոս Ղուկասեանի այդ տետրակից դուք կարգացել էք միայն «խորհուրդ խորին» երգը, որի համար ասում էք թէ ոռւսական եղանակ էր. պիտի հասկանաք որ ոռւսները «խորհուրդ խորին» չունին, որի եղանակին հետևելով թերես գրած լիներ և պ.

Մարկոս Պուեկասեանը՝ պուրեմն դուք այդ երգի մէջ զանազանութիւն գտել էք ոչ թէ եղանակը, այլ հեղինակը, որ առարաբաղար ու ուստանցի է եղել. սրանով ևս հասկացվում է թէ որչափ խանգակած սէր և համակիր սիրտ ունիք դէս ոռւսահպատակ տաղանդ ունեցող մարդիկ, Բայց ալ Պուեկասեանը չեմ կարծում որ այն պարձենելու և սնափառութիւն սիրող անձերից լիներ, որ իւր զիտութեան չափը ըլ ճանաչելով գրած լիներ այդ տեարակը. կը ներէք ցարգելի ուսուցիչ ուսուաստանցիք այդ կաղմից շատ խոչեմ են եւ զգոյշ

Պ. Թաշճեան, մեր հին շարականների ձայներին պարսկական եղանակ էլ էիք անուանել որի մասին յիշեցի յօդուածիս սկեղը Անդ եղանակների մասին տօւած է այս պարսկական անունը ինչպէս ձեր նոյն պէս եւ շատ տաճկաստանցու բերանից լսած եմ. և որդես մի նախատական անուն դուք գործ էք զնում ոչ թէ իսկապէս եղանակների վերաբերմամբ, այլ մեր ոռւսահպայերին. բայց միթէ ըլ պիտի հասկանաք որ ոչ մէկիս հայրը ոչ պարսիկ է եղել և ոչ պարսիկ որդի ինչ և իցեւ Եւ որպէս զի մի որոշ գաղափար ունենաք մեր հին եղանակների վերայ թէ նորա պարսկական չեն, թէ նորա ինչպէս խնամով և անկորուսո պահուած էին մինչեւ Հ. Գէորգ կաթուղիկոսի եշիքածին գոլը, լսեցէք հետեւալ կարծառու պատմութիւնը.

Խնչպէս եկեղեցւոյ բարեղարգութեան խիստ փշյթ ունեցող ժամանակին մեր յարգելի եպիսկոպոսները և վարդապետները եկեղեցական ամեն մի ծէս և արարողութիւն անվթար և տնկորուստ պահպաններ. համար յատկապէս ջանք են ունեցել, այսպէս և երաժշտութեան արհեստը անխառնակ և անփոփոխ պահպաններ. համար խիստ զգոյշ են եղել Եջմիածննը ամեն ժամանակ հայ մանկուոյ ուսումնառութեան կերոն լինելով, ինչպէս միւս գիտութեանը առաւել և երաժշտութիւնը բաշխուած են եղել և նորան Աւշիմ և զգաստ պատանին իւր վերայ ոչ անքան իւր եռանգուն զրչով գործած է եղել իւր ուսուցչի ուշադրութիւնը, որչափ իւր հիանալի ձայնով և անոյշ երգեցղութեամբ. Առա այժմ հարիւրամեայ ձերունեներ, որոնք զետ ևս սրտաթունդ հոգւով յիշում են այն եկեղեցաներ երգիչները, որոնք ժողովրդի համականը վայելելու և նրանից առատուպէս պարգևատրվելու յուսով, չեն խնայում ամենայն ջանք և միջոց երաժշտութիւնը ձիւս. Եւ անսխալ սովորելու համար Այ մի առարկայ զգալի կերպով բարգաւաճելու և ծաղկելու համար այնքան ժրաջան հեռեւողներ չեն ունեցել, որչափ երաժշտութիւնը Պահիմ կաթուղիկոսոց սկսած մինչեւ Մատթեոսի վախճաննը, երաժշտութեան դասուանդութեան համար մեր վանքերում մանաւանդ Եջմիածնում տիրած է եղել օրինաւոր կարգ ու կանոն. և երաժշտութիւնը աւանդուած է եղել միշտ բանագէտ և երաժշտական խաղերին խիստ հմտու վարդապետների կամ քահանաների ձեռքով. իսկ ուսանողներ եղել են առ հասարակ այնպիսի զուարթամիտ

և չուփահաս պատանիք, որոնք իրենց քաղցր և գրաւիչ ձայնով գերազանցել են մին քան զմիւսն, Չայն չունեցողը դիտմամբ զրկուած է եղել այս առարկայի գիտութիւնից և այս այն նպատակաւ, որ երգեցաղութեան ժամանակ չը խանգարէ կամ չը ինեղաթիւրէ այս կամ այն շարականը իւր կոպիտ և տգեղ ձայնով Երեկոյ և առաւօտ եկեղեցական բոլոր ժամասացութիւնք մի մի զասապետի առաջնորդութեամբ բերանացի կատարել են միշտ ձայնաւորները՝ եկեղեցւոյ դասի մէջ միշտ առանձին իւմբով կռնքնելով բաղաձայներից, Մի որ և իցէ շարական երգելու ժամանակ, բաղաձայներին խիստ արգելուած է եղել ձայն հանել իսկ շարական խաննող կամ չփոթող երգիչը զրկուած է եղել իւր օրուան մի տեսակ կերակրից, Աչա պյասկերպ առանձին խնամքով պահպանուել է երաժշտութիւնը Եջմիանեռում և ընդհանրացել ռուսաստանում պ. Թաշճեան, որին հմուտը և աւելի տեղեակը ռուսաստանի ամբողջ հայ եկեղեցականների մէջ, այժմ է միմիայն Դերդիկոք Եպիսկոպոս Յավեհեանը, որին մի ժամանակ վանքիս կառավարութիւնը յանձնած էր ինչպէս եկեղեցական պաշտամանց, Նոյնպէս և ժամասացութեանց վերայ խիստ հսկելու բոլոր լիազօր իրաւունքը, Աւրեմն պ. Թաշճեան, Սինօղը այսպիսի մի եղանակ եթէ ձայնագրել տալու լինի, յանցանք պիտի գործած լինի, և ի՞նչն է իւր հեղինակութենէն բարձր, որ դուք անկշիռ խօսքերով յարձակվում էք Ախնօղի վերայ ասելով թէ, ո՞վ իշխանութիւն տուեր է Սինօղին այդպիսի գործը մը ձեռնամուխ լինելու, Սինօղը եթէ իրաւունք ունի Կաթողիկոսական հարցերի մէջ ձայն բարձրացնելու, եկեղեցական կնճռուտ խնդիրներ լուծելու, միթէ իրաւունք չունի\* մի շարական ձայնագրել տալու, Իսկ գալով այն խնդրին, որ մեր եղանակները պարսկական եղանակ են, այդ մասին ես և դու հասակաւ շատ փոքր ենք, որ կարողանանք միաձայն պնդել թէ իսկապէս այդպէս է միայն այսքան կասեմ որ, ինչպէս շատերից՝ նոյնպէս և Հայրապետի բերանից լսած եմ որ երաժշտութիւնը սկիզբը տաճկաստանում ընդհանրացել է Սուրբ Եջմիանի նուիրակների ձեռքով,\*) ուրեմն եթէ մեր եղանակները պարսկական են, մերը՝ մայր, իսկ ձերը՝ զանազան թերութիւններով լի սիալական որդի պիտի հաշուել, Եւ ինչպէս է եղել որ, նոյն նուիրակների այստեղից տարած եղանակները Պօլսում անկորուտ է պահպանուել, իսկ Եջմիանում փոփոխութիւն է կրել այս մասին ապացոյց ունիք, թէ խօսք է որ ասումեք, Գոնէ մեր եղանակները ձերի վերաբերութեամբ այն առաւելութիւնն ունին, որ սըրտաշարժ, ներդաշնակ, սահուն և թիթեւ են,

Վերջացնելով յօդուածս ինչպէս շատերի, նոյնպէս և Սրբազն Սինօղի անդամոց ու շագրութիւնը զարձնում եմ հետեւել խնդրի վերայ,

(\*) Տես Ճայնուգիւնակ շարտկանի յառաջաբանի մէջ երես Դ.

որ ես ամենայն նեղութիւն յանձն առնելով կը կամենամ գնալ Երընցակ, և որքան կարելի է շուտով ձայնագրել վերոյիշեալ եպիսկոպոսից մեր հին շարականների եղանակները, և այս այն նպատակաւ, որ եթէ տպագրութեամբ լոյս տեսնելու բաղդ չի ունենայ, գոնէ իրրե մի հնութիւն կը պահուի վանքիս մատենագարանի մէջ ապա թէ ոչ կը գայ մի օր, որ կորցրած կը լինենք մեր հին շարականի ձայները և ի զուր տեղի տուած կը լինենք մեր յաջորդներին մեզ վերայ ծիծաղելու և մեր անհոգութեան համար մեզ իրաւամբ յանդիմանելու և նախատելու, Աւատի ժամանակաւորապէս վանքից Խեռանալու լոկ թոյլտուութիւն եմ խնդրում նոյն Սրբազն Սինօդի անդամներից, Խոկ պ. Թաշճեանի հետ ունեցած վերջին խօսքը ու խնդիրս այս կը լինի որ, ինչպէս «Հայրենիքի պ. Խմբագիրը, «Թիֆլիզի հայ աշխատակցի» իրեն հաղորդած Սինօդի անդամոց հանգուցեալ կաթողիկոսին և նորա շինած շարականին արհամարհելու սխալ լուրը յանձնել էր, պ. Թաշճեանին որ իւր դիտողութիւնն անէր զգուշաբար, որ և արել էր շատ անզգոյշ պ. Թաշճեանի միջնորդութեամբ Հայրենիքի պ. Խմբագրի դիտողութեան յանձնում եմ և ես հետեւեալ հարցը թէ, արդեօք Մանկունու Էջմիածին մնալը մեզ օգուտ է, թէ Պօլիս վերագառնալը, որը կարծես ուղելով մոռանալ իւր տասն և վեց տարուայ բարոյական կեանքը և արածները Էջմիածնում և հոգեոր իշխանութեան բոլոր շրջաններում, անզոյել իւր կոչման և աստիճանին անհաստատ և սուտ լուրերով և զրպարտութիւններով, կաթողիկոսի մեռած օրից հետէ չէ դադարում խորդախն և անազնիւ մարդոց միջոցաւ լրագրութեանց մէջ արատաւորել թէ Էջմիածինը, եւ թէ իւր սիրելի միաբանաց անունը.

## ՍԵՃԸԿ ՍԱՐԿԱՏԱԳ.

1885 8 Յ-Լէ

Ի Ս-Շ Ե Ջ Դ-Հ Ն.

## Ա Զ Գ Ա Յ Ի Ւ

ԵՐՈՒՍԱՂԵՄ ԵՒ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ ՎԻՃԱԿ.

Կ. Պօլոյ Մասիս լրագրի Մայիսի 9 թերթի մէջ գրուած է հետուեալը.—

«Վաերմ. Ստեփան փաշա տակաւին պատասխանած չէ Ս. Պատրիարք Հօր հեռագրին, որոյ վերայ տեղեկութիւն տուինք անցեալ օր բայց կկարծուի եղեր թէ ն. Վաեմութիւն պիտի ընդունի ազգային պատուիրակի անուամբ Եգիպտոսի առաջնորդական